Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/66768/02/22

Վ Ճ Ի Ռ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

«01» մարտի 2023 թվական քաղաք Երևան

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ

Նախագահությամբ դատավոր՝ Ժաննա Ասատրյանի
քարտուղարությամբ՝ Սիրանուշ Հարությունյանի
մասնակցությամբ՝
հայցվորի ներկայացուցիչ՝ Լուսինե Գրիգորյանի
պատասխանողի ներկայացուցիչներ՝ Կարեն Սարգսյանի
Պավել Գաբրելյան

դռնբաց դատական նիստում, քննելով ըստ հայցի «Կենցաղային քիմիայի գործարան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՎՀՀ 0126711, գրանցման համար 271.110.863618, հասցեն՝ ՀՀ Երևան քաղաք Արշակունյաց 125/3, էլեկտրոնային փոստի հասցեն՝ bitxim.g@gmail.com) ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյան (անձնագիր՝ BA293820, տրված 02.05.2016 թվականին, 010-ի կողմից, փաստաբանական գործունեության արտոնագիր թիվ 2813, լիազորագիր տրված 15.12.2022 թվականին երկու տարի ժամկետով, էլեկտրոնային փոստի հասցեն՝ hyengoyan@hotmail.com) Լուսինե Գրիգորյան (անձնագիր 55 0225340, տրված 17.04.2019 թվականին, ՌԴ ԱԳՆ 37401-ի կողմից, փաստաբանական գործունեության արտոնագիր թիվ 1700, լիազորագիր 31.01.2023 թվականին տրված երեք տարի ժամկետով, էլեկտրոնային փոստի հասցեն՝ Lusin1990@mail.ru) ընդդեմ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (ՀՎՀՀ 01503448, պետական գրանցման համար թիվ 222.160.840254, հասցեն՝ ՀՀ քաղաք Երևան Կորյունի փողոց 2, էլեկտրոնային փոստի հասցեն՝ genserv@ysmu.am) ներկայացուցիչներ Կարեն Սարգսյան (անձնագիր AU0650335, տրված 16.03.2022 թվականին 00-ի կողմից, փաստաբանական գործունեության արտոնագիր 1247, լիազորագիր 14.11.2022 թվականին տրված երեք տարի ժամկետով, էլեկտրոնային փոստի հասցեն՝ legal.sargsyan@gmail.com), Պավել Կամոյի Գաբրելյան (անձնագիր AV0266436, տրված 16.06.2022 թվականին 062-ի կողմից, լիազորագիր 01.02.2023 թվականին տրված մեկ տարի ժամկետով)՝ ««Կենցաղային քիմիայի գործարան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ռեկտորի 08.12.2022 թվականի թիվ 09/1673 որոշումն անվավեր ճանաչելու» պահանջի մասին,

ՎՃՌԵՑ

1. «Կենցաղային քիմիայի գործարան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի՝ ««Կենցաղային քիմիայի գործարան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ռեկտորի 08.12.2022 թվականի թիվ 09/1673 որոշումն անվավեր ճանաչելու» պահանջի մասին, բավարարել.

ա. Անվավեր ճանաչել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ռեկտորի 08.12.2022 թվականի թիվ 09/1673 որոշումը:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 04.01.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանել մինչև վճռի կատարումը՝ այնուհետև վճռի կատարումից անմիջապես հետո վերացնել:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

5. Վճռի կատարում ենթադրող մասը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ժ. ԱՍԱՏՐՅԱՆ